**321. ԽԱՉՔԱՐ**, մնում է միայն վերին կեսը, գանվում է Տոնաշենից վեր, «Լճակների տեղ» վայրում. շրջանակներին թերի 3 տող.



···ՀԱՑՐ ՍԱՐԳԻՍ··|···ՈՐ ԿԱՆԳՆԵ|····
ՑԻ—ՍԲ. ԳՈՐԳԱ······

Ծանոթ. Գրչության ոճը XIII դարի է։

## 24. ԹԱԼԻՇ ԳՅՈՒՂԻ ՇՐՋԱԿԱՅՔ, ՀՈՌԵԿԱ ՎԱՆՔ, ԴՅՈՒԹԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏԵՂ

Պատմական այն միջավայրը, որը նկարագրելու ենք Ջրվշտիկ վանք բաժնում, այժմ դատարկված է բոլոր հին բնակավայրերից՝ Կաղանկատուք, Դյութական, Հոռեկ գյուղերից։ Այդ բոլորի փոխարեն այժմ գոյություն ունի միայն Թալիշ գյուղը, իսկ հին բնակավայրերը բոլորովին ավերված են և կազմում են Թալիշ գյուղի հանդամասերը, որոնք ունեն հետևյալ հուշարձաններն ու արձանագրությունները։

Ա. Հոռեկա վանք. գտնվում է Թալիշ գյուղից 4—5 կիլոմետր հեռու, դեպի հարավ-արևմուտք, անտառապատ սարալանջին։ Ինչպես անունն է ցույց տալիս և հաստատվում է Մ. Կաղանկատվացու վկայությամբ, հնում վանքի մոտ եղել է Ուռեկ-Ուռեկան անունով բնակավայր՝ «Ստեփաննոս քահանայ յՈւռեկան գեղջէ»[1]։

Վանքը կազմված է եկեղեցուց և գավթից, երկուսն էլ փոքր շենքեր են՝ կառուցված անտաշ քարերով և մթին, առաջինը շինված է 1279 թ., երկրորդը՝ 1284 թ., հետևաբար պատմագրի հիշատակած ժամանակվանից մնացած շենքեր չեն։ Շուրջը կան խուցերի փլատակներ։

Բ. Գերեզմանատուն. տարածված է վանքի արևելյան կողմում, շատ ընդարձակ է և այժմ ծառայում է որպես գերեզմանատուն՝ Թալիշ գյուղի համար։ Գերեզմանատան հին մասը, որը եղել է Գյուլիստանի մելիքների տոհմական գերեզմանոցը, խիստ ավերված է, տապանաքարերը սպիտակավուն քարից և մարմարից են։ Դրանց մեծ մասը դիտավորյալ ջարդոտված են. մի մասն էլ վնասվել են հողմահարությունից։ Դրանցից հնագույնը եղել է Մելիք Բեգլարյան տոհմի հիմնադիր Մելիք Աբովի տապանաքարը, որի վրա կա ՌՁԱ (1632) թվականը[2]։ Նկատի ունենալով արձանագրությունների այս վիճակը և այն, որ մեծ մասամբ XVIII—XIX դարերի են և Ե. Լալայանը ավելի ամբողջական վիճակումն է արտագրել, վկայակոչում ենք Լալայանի աշխատությունը) «Ազգագրական հանդէս», Ե գիրք, Թիֆլիս, 1899 (№ 1), էջ 262—263)։

Գ. Մելիք Բեգլարյանների ապարանք. Գյուլիստանի մելիքները այս վայրում շինել են իրենց ամառանոցը և մշտական բնակավայրը։ Այն գտնվում է Հոռեկա վանքի մոտ, դեպի արևմուտք՝ 100—150 մ հեռավորության վրա։ Դա մի ապարանք-բերդ է, համարյա կանգուն՝ բրգավոր պարիսպներով շրջափակված. բակի ներսում ամբողջական են մի քանի մեծ սենյակները և բազմաթիվ այլ շինությունների կիսավեր մնացորդները։ Սենյակները շինված են մաքուր, սրբատաշ քարերով՝ ներսից և դրսից թաղածածկ են, պատերի մեջ ունեն բազմաթիվ պատուհաններ և դարակներ՝ ամանեղենի համար. դրանցից մեկի մուտքի ճակատին գրված է եղել՝ Ցիշատակ է Ոճան Բաբուն. մերեն Մելիք Թամրազ:ՌՃԾ: (1701)[3]:

---

[1] Մ. Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Թիֆլիս, 1913, էջ 18։
[2] «Ազգագրական հանդէս», գիրք Ե, էջ 220,
[3] Նույն տեղում, 267,

Դ. Դյութական գյուղատեղ. գտնվում է Թալիշից դեպի հյուսիս, սարալանջի անտառապատ և հովասուն վայրում եղել է արքայական ամառանոց, նաև կաթողիկոսարան։ Այստեղ Վաչագան Թագավորը հիմնել է դպրոց, ուր քրիստոնեություն էին ուսուցանում քրմերի որդիներին։ Եղել է այստեղ և հնագույն եկեղեցի, որի տեղում 1151 թվականին շինվել է ուրիշը։ Դեռևս Ջալալյանցի ժամանակ եկեղեցին կանգուն է եղել, այժմ ավերակներն են մնացել, իսկ շուրջը եղած տապանաքարերը ոչնչացվել կամ ծառ ու թփերով ծածկվել են։ Մեջ բերվող երեք արձանագրությունները առնում ենք Ջալալյանից։

## ՀՈՌԵԿԱ ՎԱՆՔ

**322.** ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքի կիսակամար ճակատաքարին, արտաքուստ (գավթի մեջ) 6 տող.



Ի ՔԱՀԱՆԱՊԵՏՈՒ|ԹԵ. ՏՐ. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ, Զ|ՇԻՆՈՂ ԵԿԵՂԵՑՈՑՍ ԶՏՐ.| ՅՈՀԱՆՆԷՍ ՅԻ-ՇԵՑԷՔ Ի ՔՍ. ՆԱ ԵՒ ԶԾՆՈՂՍ ԵՒ ԶԵՂ-ԲԱՐՍՆ ԻՒՐ.|ԹԻՒ. :ԶԻԸ: (1279):

Հրատ. Շահխաթունեանց, II, 378, Բարխուդարեանց, 229,

**323.** ԳԱՎԹԻ արևմտյան մուտքի կիսակամար ճակատաքարին, արտաքուստ, 7 տող.



ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼ| ՏԵՐՈՒԹԵ. ԱՊԱՂԱ ԽԱՆԻՆ| ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ. ՏՐ ՍՏԵՓԱՆ-Ն|ՈՍԻ ԵՒ ՊԱՐՈՆՈՒԹԵ. ՆՈՐԱԴԻՆ[Ի]Ն ԵՒ ՍԻՐԱԶ|ԱԴԻՆԻՆ ԵՒ ԳՈՒՐՋԱԴԻՆԻՆ. ԵՍ ՏՐ. ՅՈՀԱ|ՆՆԷՍ ՇԻՆԵՑԻ ԶԳԱՒԻԹՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ| ԵՒ ԵՂԲԱՐՑ ԵՒ ԾՆՈ-ՂԱՑ ԻՄՈՑ. :ՋԼԳ: (1284):

Հրատ. Շահխաթունեանց, II, 378, Ջալալեանց, I, 175, Բարխուդարեանց, 229, Լուսանկ. 81

*324.* ***ԳԱՎԹԻ*** *հարավ-արևելյան որմնամույթի վրա, երեսով արևմուտք, 5 տող.*

ԶՄԻԱԲԱՆԵԿԵՂԵ
ՑՈՅՍԶՍԱՐԳԻՍԶԻՇ
ԽԱՆԱՑԵԼԱՈՐԴԻՆՑԻ
ՇԵՑԵՔԻՔՍ ԵԻԶԱ
ՄԻՍԻՆԵԻԶՈՐԴԻՍՆԻՐ:

ԶՄԻԱԲԱՆ ԵԿԵՂԵ|ՑՈՑՍ ԶՍԱՐԳԻՍ ԶԻՇ|ԽԱՆ ⌊Ն⌋ԱՑԵԼԱ ՈՐԴԻՆ ՑԻ|ՇԵՑԷՔ Ի Ք͞Ս. ԵՒ ԶԱՄ|ՈՒՍԻՆ ԵՒ ԶՈՐԴԻՍՆ ԻՒՐ։

Ծանոթ. *Համարում ենք շինության ժամանակակից և նպաստող, XIII դ. երկրորդ կես։*

*325.* ***ԽԱՉՔԱՐ,*** *ագուցված է գավթի հարավ-արևելյան խորշի մեջ, քիվին 2 տող.*

ՄԻԽՉՄՄԵԽՕՍՀՈԳՈՅՆ ՄԱՐ
ՏԻՐՈՍԱԲԵՂԽԵԻԾՆՂՑՆՈՐԻՆ

ՍԲ. Խ⌊Ա⌋ՉՍ ԲԱՐԵԽՕՍ ՀՈԳՈՑՆ ՄԱՐ|ՏԻՐՈՍ ԱԲԵՂԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՆՈՐԻՆ։

*326.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *մեծ, տափակ, գտնվում է գավթի մեջ, երեսին 1 տող.*

ԱՅՍԷՀԱԳԻՍՏԻՇԽԱՆԻՆ:|· · · ՆԹՋԽԴ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԻՇԽԱՆԻՆ . . . ԹՎ. ։ՋԽԴ։ (1495)։

*327.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *մեծ, տափակ, գտնվում է գավթի մեջ, երեսին 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ։ԶԱՔԱՐԱԱԿՔԻ
ԹՋԺ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԶԱՔԱՐ ՍԱՐԿԱՒԱԳԻ.|ԹՎ. ։ՋԺ։ (1461)։

Ծանոթ. *Սարկավագ բառը ենթադրական է։*

*328.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *մեծ, տափակ, գտնվում է գավթի մեջ, երեսին 2 տող.*

ԱՅՍԷՀԱԳԻՍՏՀԱ...
ԹՋԾ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ . . . . . |ԹՎ.։ՋԾ։ (1501)։

*329.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *տափակ, մեծ, գտնվում է գավթի մեջ, երեսին 1 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՍԱՐՀԱՏԻՆԱՅՂՈՒԹԾ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐՀԱՏԻՆ . . . . |ԹՎ ԻՆ.։ՌԾ։ (1601)։

Ծանոթ. *Տողավերջի գրերը խառն են. Թվականը՝ ենթադրական։*

*330.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *մեծ, տափակ, մարմարից, գտնվում է գավթի մեջ, երեսին 2 տող.*

ԱՅԱՀԱՆԳԻՍՏԱԲՐՀԱՄ
ՍՐԿՈՐՉԻԱՅՀԵՂՉԵՂԱ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱԲՐՀԱՄ| Ս⌊Ա⌋ՐԿ⌊Ա⌋ՒԱԳԻՆ, ՈՐ ԶԻԱՑՀԵՂԶ ԵՂԱ⌊Ւ⌋։

*331.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *նորոգության ժամանակ դրվել է եկեղեցու պատի մեջ, հարավ-արևելյան անկյունում, արտաքուստ, երեսին և ճակատին 3 տող.*

ԱՅՍԷՀԱԳԻՍՏԴԱՒԹԻՍ
ԽԱ|ՍԱ:
|ԻՊԻ·

ԱՅՍ Է ՀԱ⌊Ն⌋ԳԻՍՏ ԴԱՒԹԻՆ|, ԽԱՍԱՂ|ԻՊԻ⌊Ն⌋։

Ծանոթ. *Վերջին բառը հնարավոր է վերծանել նաև խ⌊աչ⌋ս ԱՂԻՊԻՆ և խաս ԱՂԻՊԻՆ։*

**332. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *ընկած է բակում, ճակատին 6 տող.*

ԱՅՍԷ ՀԱՆ
ԻՇ ՀՌՈՒՍՄ
ՍՄԻՆԴՐՄՍՄ
ՏՐ ԱՌԱՔ
ԷԼԻՆ: ԹՎ
ՌՂԹԻՆ:

ԱՅՍ Է ՀԱՆ[Գ]Ի[Ս]Տ ՀՌՈՒՍ[Ի]ՄԻՆ, Դ[Ո]Ի[Ս]Տ[Ե]Ր [Տ]Ր. ԱՌԱՔ[Ե]ԼԻՆ. ԹՎ. ՌՂԹ: (1640)-ԻՆ:

Լուսանկ. 82

**333. ԽԱՉՔԱՐ,** *փոքր, ընկած է բակում, թևերի արանքում 1 տող.*

ԱՅՍ ԽԱ ՉՍ ՏՐԱՂԱՐԻՆ

ԱՅՍ ԽԱՉՍ ՏՐ. ԱՂԱՐԻՆ:

**334. ԽԱՉՔԱՐ,** *կանգնած է բակում, քիվին 2 տող.*

ՔԽՉՍՔՐԽՍՄԻՔԵԼԵՊՍԻՆՔՈՒԵՐՑ
ՆԻՒՐՀՌՒԸՓՍԻՄԻՆ ՄԱՐԻԱՄԻՆ

[ՍՈՒ]Ր. Խ[Ա]ՉՍ Ք[Ա]Ր[Ե]Խ[Ա]Ի[Ս] ՄԻՔԵԼ ԵՊ[Ի]ՍԿ[Ո]Պ[Ո]ՍԻՆ, ՔՈՒԵՐՑ[Ն] ԻՒՐ ՀՌԻՓՍԻՄԻՆ, ՄԱՐԻԱՄԻՆ:

**335. ԴՑՈՒԹԱԿԱՆԻ** *եկեղեցու մուտքի բարավորի վրա՝*

Ի թուին :Ո: (1151). ի հայրապետութեան տեառն Ներսիսի կաթողիկոսին, ես Ներսէս եպիսկոպոս շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և տէր Սարգսի, ծնողաց իմոց

*Հրատ. Ջալալեանց, II, 249։*

**336. ԴՑՈՒԹԱԿԱՆԻ** *եկեղեցու պատի վրա՝*

Ես տէր Յովսէփ Աղուանից կաթողիկոս հիմնադրեցի զեկեղեցիս:

*Հրատ. Ջալալեանց, II, 249։*

**337. ԴՑՈՒԹԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ** *մուտքի հյուսիսային կողմում.*

Ես Մխիթար Մէհլայ ուդի տուի զիմ այգետեղին յեկեղեցիս Գետ Այտանու տէրանց վկայութեամբ, որ խափանեն զայս, անիծած են:

*Հրատ. Ջալալեանց, II, 250։*

## 25. ՋՐՎՇՏԻԿ ԿԱՄ ԵՂԻՇԷ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔ

*Արցախի այս հնագույն վանքը աշխարհագրական այնպիսի դիրք ունի, որի շնորհիվ դարերի ընթացքում այս վայրում տեղի են ունեցել քաղաքական ու մշակութային շատ կարևոր իրադարձություններ։ Նշանավոր Պարտավ քաղաքի հանդեպ (հիմնված V դարում) Մռավի լեռնաշղթայից իջնող բազուկները պատնեշի նման սահմանազատում են Կուրի ավազանի հարթավայրը Արցախի լեռնային ու անտառապատ ձորերից: Պարտավի դիմաց, այդ լեռնաբազուկների հյուսիսահայաց անտառապատ լանջերը թե՛ Պարտավի և թե՛ շրջակա դաշտային մասերի բնակչության համար հանդիսացել են ամառանոցային վայրեր, իսկ վտանգի պահին նաև անմատչելի ապաստարան։ Այս միջավայրում էր գտնվում նշանավոր Գլուտական կամ Դլութական գյուղը, որը Աղվանից թագավորների ամառանոցն էր և որի մերձակայքում VII դարի սկզբում իրար բախվեցին բյուզանդական զորքերը՝ Հերակլ կայսեր առաջնորդությամբ, և պարսից բանակը։ Այստեղ էին գտնվում նաև Կաղանկատույք գյուղը (ուր ծնվել է պատմագիր Մ. Կաղանկատվացին), Տիգրանակերտ և Ուռեկան հին գյուղերը, որոնց մասին տեղեկություններ է հաղորդում Աղվանից պատմագիրը։ Այս վայրում է գտնվում նաև Ջրվշտիկ վանքը։*